ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ ՆՎԻՐՎԱԾ ՌՈՒՍԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 400-ԱՄՅԱԿԻՆ

Մարտի 18-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի գիտական սեսիան՝ նվիրված ռուսական տպագրության 400-ամյակին։

Սեսիան ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նշելով տպագրության ստեղծման վիթխարի դերն ու նշանակությունը Ռուսաստանի հասարակական-կուլտուրական զարգացման գործում, նա խոսեց տպագրական տեխնիկայի հետագա կատարելագործման և այդ ասպարեզում գիտության առջև դրված նոր խնդիրների մասին։

«Ռուսական տպագրության 400-ամյակը» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը։ Համառոտակի կանգ առնելով XVI դարի Ռուսաստանի սոցիալ-տնտեսական վիճակի վրա, նա հանգամանորեն պատմեց այն մեծ գիտական սխրագործության մասին, որ կատարեց Իվան Ֆեդորովը, Ռուսաստանում սկզբնավորելով հասարակական գործունեության մի նոր ճյուղ՝ տպագրությունը։ Այնուհետև զեկուցողը ուրվագծեց ռուսական տպագրության անցած ուղին, առանձնապես շեշտելով այն անգնահատելի դերը, որ կատարել է մարքսիստական գրականությունը՝ Ռուսաստանում ապրող բոլոր ժողովուրդների կյանքում։ Վերջում ակադ. Կարինյանը խոսեց Սովետական Միությունում տպագրական գործի հակայական վերելքի մասին։ Ռուսական տպագրության 400-ամյակը, ասաց զեկուցողը, մեր հայրենիքի ժողովուրդները տոնում են որպես կուլտուրայի պատմության նշանավոր տարեթիվ։

Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ս. Բարայանը զեկուցում կարդաց «Ռուսաստանի առաջին հայկական տպարանները» թեմայով։ Նա մանրամասնորեն խոսեց Պետերբուրգում, Մոսկվայում, Թիֆլիսում և Ռուսաստանի մյուս հայկական գաղութներում հայ տպագրության ստեղծման, հայերեն գրքի հրատարակման ու տարածման մասին, նշեց այն խոշոր դերը, որ կատարել են ականավոր հայ տպագրիչները ու հրատարակիչները կուլտուրայի և հասարակական կյանքի այդ կարևոր բնագավառում։

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏԱՐԱՍ ՇԵՎՉԵՆԿՈՅԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

Խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ ամբողջ աշխարհում նշվեց ուկրաինական մեծ բանաստեղծ, նկարիչ ու մտածող, ազատության և ժողովուրդների եղբայրության յուպաշունչ երգիչ Տարաս Շևչենկոյի ծննդյան 150-ամյակը։ Այդ նշանավոր հոբելյանական տարեթվին էր նվիրված նաև մարտի 10-ին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում կայացած հանդիսավոր նիստը։ Եղբայրական ուկրաինական ժողովրդի անմահ զավակի հիշատակը մեծարելու համար այստեղ էին եկել մեր ռեսպուբլիկայի աշխատավորության, ստեղծագործ ինտելիգենցիայի և ուսանողության բազմաթիվ ներկայացուցիչներ։

Հոբելյանական նիստը ներածական խոսքով բացեց գրող Նաիրի Զարյանը։ Նա ընդգծեց այն մեծ ծառայությունը, որ մատուցել է Տարաս Շևչենկոն ինչպես ուկրաինական գրականության ու կուլտուրային, այնպես էլ ճորտատիրության և ցարական ինքնակալության լծից ժողովուրդների ազատագրության համար մղված հերոսական պայքարին։ Տարաս Շևչենկոն, ասաց նա, իր կարճատև կյանքով շլացուցիչ կայծակի պես փայլատակեց Ուկրաինայի ու ամբողջ Ռուսաստանի ճորտատիրական կարգի խավար գիշերում, նա անդուլ պայքարում էր ազատ ու երջանիկ մարդկության համար։

Տարաս Շևչենկոյի կյանքի և ստեղծագործության մասին հանգամանալից զեկուցումով հանդես եկավ բանաստեղծ Գեղամ Սարյանը։ Մեծ Կոբզարի անմահ ստեղծագործության մեջ սքանչելի գեղարվեստական վարպետությամբ արտացոլվել են ժողովրդի վիշտն ու տառապանքը,

աննկուն մարառումը, նրա հոգու գեղեցկությունն ու պայծառ երազանքը։ Շևչենկոն գրականության ժողովրդայնության մեծ դրոշակակիրն էր, ռեալիստական-դեմոկրատական գաղափարների ջերմ պաշտպանն ու անվեհեր տարածողը ժողովրդի ամենալայն խավերում։ Տարաս Շևչենկոն իր հանճարեղ ստեղծագործությամբ աշխարհին ցույց տվեց ուկրաինական ժողովրդի հոգևոր մեծ ու անսպառ հարստությունը, նրա հոգու արիությունը, անհուն մարդասիրությունը։

Ժողովրդական անմահ երգիչը անգնահատելի դեր խաղաց հայրենի գրականության զարգացման և հասարակական կյանքի առաջընթացի մեջ։ Բայց նրա ստեղծագործության նշանակությունը դուրս է գալիս իր երկրի սահմաններից։ Մեծ բանաստեղծը երազում էր այն ժամանակների մասին, երբ Ռուսաստանի ժողովուրդները կմիավորվեն հաշտ ու խաղաղ, եղբայրական հզոր մի ընտանիքում և կապրեն ազատ ու երջանիկ։ Ահա թե ինչու նրա անունը հարազատ ու թանկ է մեր հայրենիքի՝ մեծ Կորգարի երազած ազատ ու եղբայրական հզոր ընտանիքի բոլոր ժողովուրդների համար, ահա թե ինչու նա ապրում ե հարատևում է առաջավոր մարդկության բոլոր անմահ երգիչների հետ միասին։

Ուկրաինական մեծ երգիչը եղել և մնում է նաև հայ ժողովրդի ամենասիրելի պոետներից մեկը։ Դեռևս անցյալ դարի 70-ական թվականներից նրա ստեղծագործությունները թարգմանվել են հայերեն։ Ավելի քան կես դար առաջ հայ իրականության մեջ Տարաս Շևչենկոյին դիպուկ կերպով անվանեցին «Ուկրաինական Պրոմեթևոս»։ Հանճարեղ բանաստեղծի ստեղծագործությունը բազմիցս թարգմանվել և մեծ տպաքանակով հրատարակվել է Սովետական Հայաստանում։ Տարաս Շևչենկոն, վերջում ասաց զեկուցողը, ուկրաինական ժողովրդի սիրտն է։ Ոգեշունչ հայրենասիրությամբ, ազատասիրությամբ տոգորված նրա հանճարեղ պոեմներն ու բանաստեղծությունները դարձել են բոլոր ժողովուրդների սեփականությունը։

* * *

Ուկրաինական մեծ բանաստեղծ Տարաս Շևչենկոյի ծննդյան 150-ամյակին էր նվիրված Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի կազմակերպած գիտական սեսիան, որը կայացավ մարտի 9-ին։ Սեսիան ներածական խոսքով բացեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Մ. Գ. Ներսիսյանը, որը բնութագրեց ուկրաինական ժողովրդի մեծ զավակին՝ որպես հանճարեղ բանաստեղծի, ականավոր ռեալիստ-դեմոկրատի, ազատության և հումանիզմի մեծ երգչի։

«Տարաս Շևչենկոն որպես մեծ հումանիստ մտածող» զեկուցումով սեսիայում հանդես եկավ Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Կարինյանը։ Վերլուծելով մեծ գրողի գեղարվեստական հարուստ ժառանգությունը, նա բացահայտեց այն նշանակալից դերը, որ կատարել է անմահ Կորգարը իր ստեղծագործությամբ հասարակական մտքի զարգացման, հումանիզմի, ազատասիրության և ժողովրդասիրության վեհ գաղափարների տարածման գործում։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Արեշյանը զեկուցում կարդաց «Տարաս Շևչենկոն և հայ գրականությունը» թեմայով։ Նա առանձնապես կանգ առավ ինչպես նախասովետական շրջանում, այնպես էլ մեր օրերում ժողովրդական մեծ երգչի գործերից կատարված հայերեն թարգմանությունների վրա, ցույց տվեց, թե ինչպիսի մեծ ուշադրության և բարձր գնահատության է արժանացել դեմոկրատիզմի ու հումանիզմի ոգով հագեցած նրա փայլուն ստեղծագործությունը անցյալի առաջադիմական հայ մամուլում, զուգահեռներ անցկացրեց Տ. Շևչենկոյի և Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության մի շարք կողմերի միջև։

Տարաս Շևչենկոն, հանճարեղ բանաստեղծ լինելուց բացի, ժողովրդականություն է վայելել նաև որպես նկարիչ։ Իր բազմաթիվ նկարներում նա երգել է ժողովրդի վիշտն ու տառապանքը, նրա ստրկական վիճակը և ապագայի լուսավոր երազանքը։ Նա մեծ հումանիստ և ականավոր դեմոկրատ մտածող էր նաև իր ստեղծած կտավներով։ Այս հարցերը հանգամանորեն լուսաբանվեցին «Տարաս Շևչենկոն և արվեստը» զեկուցման մեջ, որ սեսիայում կարդաց Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Դրամբյանը։

Ա. Դ.

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ ՆՎԻՐՎԱԾ ԳԱԼԻԼԵՈ ԳԱԼԻԼԵՅԻ ԾՆՆԴՅԱՆ 400-ԱՄՅԱԿԻՆ

1964 թ. մարտի 5-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի նախագահությանը առընթեր Բնագիտության և տեխնիկայի պատմության խորհրդի գիտական սեսիան, որը նվիրված էր իտալական մեծ գիտնական առաջապահ, ֆիզիկոս, մաթեմատիկոս ու փիլիսոփա Գալիլեո Գալիլեյի ծննդյան 400-ամյակին։